«Ա.Չեխովի անվան N 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 2-րդ բաժնի 17-րդ կետի 3-րդ ենթակետով պայմանավորված դպրոցը որոշել է իրականացնել սովորողների լրացուցիչ կրթական ծրագրեր:

Նկարչության լրացուցիչ կրթական թեմատիկ ծրագիր

Նկարչության լրացուցիչ կրթական ծրագրի ընդհանուր տևողությունը 9 ամիս (36 շաբաթ) է: Առաջարկվող ծրագիրը նախատեսված է 6-10 տարեկան դպրոցականների համար:

Առաջարկվող շաբաթական ծանրաբեռնվածությունը ժամերով. 1 դաս՝ 40 րոպե տևողությամբ:

Նկարչության լրացուցիչ կրթական ծրագիրը իրականացնելու է համապատասխան որակավորում ունեցող մասնագետը(կից ներկայացվում է փաստաթղթերը):

Նկարչության լրացուցիչ կրթական ծրագրի համար սահմանվել է ամսական 5000 ՀՀ դրամ վարձավճար:

Դպրոցում գործող Երկարօրյա ծրագրի ամբողջական փաթեթից օգտվելու դեպքում վճար չի գանձվում:

Ծրագրի ընդհանուր նկարագրությունը

Նկարչության լրացուցիչ կրթական ծրագիրը երեխաներին ինքնաարտահայտվելուհնարավորություն է տալիս,երեխան փորձում է իր ուժերը նկատարելագործում է իր հնարավորությունները:Նկարչության լրացուցիչ կրթական ծրագիրը հաճույք է պատճառում,բայց ամենից առաջ հարստացնում է երեխայի պատկերացումը աշխարհի մասին:

Սովորելու պրոցեսում աշակերտները գիտելիքներ են ստանում գունատեսության, պարզագույն կառուցումների, գծային պատկերների, դեկորատիվ ոճերի,կոմպոզիցիայի,ապլիկացիայի,նկարչության, կերպարվեստի հայտնի վարպետների և բնության գեղեցկության ու մարդկային զգացմունքների մասին:

Շրջապատը տեսնելու և հասկանալու ունակությունը, նպաստում է գեղագիտական ճաշակի զարգացմանը,աշխատանքային և ստեղծագործական ակտիվությանը,դաստիարակում է նպատակասլացություն,նստակյացություն,ինքնարտահայտման հնարավորություն է տալիս։

Ծրագրի հիմնակաան նպատակները՝

1. Զարգացնել երևակայությունը, պատկերավոր մտածողությունը, դիտողականությունը, ուշդրությունը,նպտակսլաացությունը, աշխատասիրությունը,դյուրազգցությունը,հանդուրժողականությունը։
2. Ձևավորել գեղեցիկը տեսնելու, զգալու,գնահատելու, պահպանելու և արարելու ցանկությունը և կարողությունը։
3. Արմատավորել ցանկաացած գործունեության նկատմամբ ստեղծագործ վերաբերմունք դրսևորելու կարողությունը։

Խնդիրներն են՝

- Ընդլայնել երեխաների աշխարհայացը։
- Զաարգացնել գեղագիտական և գեղարվեստական ընկալունակությունները։
- Սովորեցնել համեմատել իրականը երևակայական ստեղծագործության հետ։

Նկարչության լրացուցիչ կրթական ծրագրի դասընթացը իրականացվում է երկու բաժիններով՝ իրականության և արվեստի ընկալում ու պրակտիկ գործունեություն։

Դասավանդումը իրականացվում է չորս հիմնական գործառույթով.

1. Գծանկար
2. Գունանկար
3. Դեկորատիվ կիրառական գործունեություն

4. Կերպարվեստի պատմություն և տեսություն

Ծրագրի ակնկալվող վերջնարդյունքներ՝

1. Երեխաները կկարողանան պատկերավոր մտածել, կզարգանա երեխաների դիտողականությունը, ուշադրությունը,աշխատասիրությունը,կզարգանա հանդուրժողականությունը։
2. Երեխաների մոտ կձևավորվի գեղեցիկը տեսնելու, զգալու,գնահատելու, պահպանելու և արարելու ցանկությունը և կարողությունը։

Երեխաները կկարողանան ցանկաացած գործունեության նկատմամբ ստեղծագործական վերաբերմունք դրսևորել։

N	Պարապմունքի թեմա	Նպատակ
1	Ներածական զրույց «Ինչից է սկսվում նկարչությունը». զրույց ներկերի, գույների և նրանց խառնուրդների մասին։ (1 ժամ)	Ծանոթացնել աշխատանքային տեղի կազմակերպման օրենքներին, գեղարվեստական նյութերին։ Սովորեցնել խառնել հիմնական գույները և ստանալ նրանց խառնուրդները։Նկարել աբստրակտ նկարներ։
2	Նկարել խորանարդ. հասկացություն գծերի մասին։(1 ժամ)	Սովորեցնել ճիշտ կառուցել խորանարդը, լույս ու ստվերի միջոցով ստնալ ծավալ։ Վարժություն՝ ուղղահայաց,հորիզոնական և թեք գծեր։
3	Նկարել աշնանային կոմպոզիցիա «Կուժ տերևներով»։(1 ժամ)	Սովորեցնել ճիշտ տեղադրել կոմպոզիցիան թղթի մեջ, կառուցել կուժը և գույներով ստանալ ծավալ։
4	Տերևների արտատպում «Տերևաթափ».նկարել «Աշնանային նատառ»։ (2 ժամ)	Սովորեցնել պատկերացումով նկարել, ստանալ աշնանային գույները և շունչը։ Սառը և տաք գույներով մասին հասկացություն։Նկարել աշնանային տեսարաններ։
5	Թեմատիկ նկաարչություն օրիգամի «Ակվարիում»։ (1 ժամ)	Սովորեցնել ստեղծել կոմպոզիցիա, նկարել ակվարիում,սոսնձել ձկնիկներ օրիգամիի տեխնոլոգիայով պատրաստված։
6	«Ձմեռ պապիկի արհեստանոցում». նկարել տոնածառի խաղալիքներ։(1 ժամ)	Սովորեցնել ստեղծել տոնական տրմադրություն ներկերով։
7	Ձմեռային պատկերներ։ Նկարել ձմեռային բնանկար։ Առաջին ձյան փաթիլները։(2 ժամ)	Կտարելագործել ստեղծագործական ձեռքբերումները։ Սովորեցնել նկարել փաթիլներ,ձմեռային տեսարաններ։

8	Նկարել ձմեռային տեսարան։ (1 ժամ)	Սովորեցնել աշակերտներին ուշադիր լինել շրջապատող բնությանը և արտահայտել ներկերով թղթի վրա։
9	Զարդանախշը ուղղանկյան մեջ։Նկարել զարդանախշ ձմեռային պատկերներով։(1 ժամ)	Բացատրել զարդանախշ հասկացողությունը։ Սովորեցնել կազմել նախշ ուղղանկյան մեջ առաջադրված մասնիկներից։
10	Նկարել տնային ծաղիկ բնականից։(1 ժամ)	Սովորեցնել նկարել բնականից փոխանցելով արտաքին տեսքի և գույնի առանձնահատկությունները։Նկարել բնական ծաղիկներ։
11	Նկարել նատյուրմորտ գծանկար բախկացած խորանարդից և սափորից։(1 ժամ)	Սովորեցնել ճիշտ տեղադրել թղթի մեջ կոմպոզիցիան, ճիշտ կառուցել, լույս ու ստվերը զգալ և արտահայտել։
12	Շարունակել նատյուրմորտը։ (2 ժամ)	
13	Նկարել զարդանախշ տարբեր մոտիվներով։ (1 ժամ)	Սովորեցնել ճիշտ կառուցել զրդանախշը։ Նկարել հայկական նաղշեր։
14	Նկարել գորգի նախշ /հորինել/ և գունավորել։ (2 ժամ)	Սովորեցնել ազգային գորգի նախշերը և այդպիսով զարգացնել ճաշակ։Նկարել հայկական գորգեր։
15	Նկարել գորգ սովորած նախշերով։ (2 ժամ)	Սովորեցնել գորգի առանձնահատկությունները։

16	Նկարել նատյուրմորտ /կուժ, խնձորներ/։ (2 ժամ)	Սովորեցնել ճիշտ տեղադրել թղթի մեջ և գույնով ու լույս ու ստվերով ստեղծել ծավալ։
17	Պատրաստել բացիկ մարտի 8-ի կապակցությամբ ։ (1 ժամ)	Կատարելագործել երեխայի կարողությունները և զարգացնել երևակայությունը ։
18	Նկարել գարնանային ծաղիկներ ։ (1 ժամ)	Սովորեցնել նկարել բնականից, փոխանցելով արտաքին տեսքի առանձնահատկությունները ։
19	Նկարել բնանկար «Իմ սիրելի քաղաքը »։ (1 ժամ)	Ծանոթացնել շենքերի և փողոցների հեռանկար հասկացության հետ։Նկարել տարբեր քաղաքներ։
20	Նկարել ազգային հագուստով տիկնիկներ։ (2 ժամ)	Սովորեցնել նկարել տիկնիկ,ծանոթացնել ազգային հագուստին։
21	Դեկորատիվ նկարչություն։ (2 ժամ)	Ծանոթացնել դեկորատիվ նկարչության հիմունքներին։
22	Զրույց հայ և համաշխարհային նկարիչների մասին։ (1 ժամ)	Ծանոթացնել համաշխարհային և ազգային վարպետների աշխատանքներին։Նկարել բնօրինակներից։
23	Նկարել «Գարուն» բնանկար։ (2 ժամ)	Թեմատիկ նկարչություն.նկարել՝ ինչպես է գալիս աշունը։

24	«Օրիգաամ» պատրաստել ծաղիկներ։ (2 ժամ)	Սովորեցնել պատրաստել ծաղիկներ օրիգաամիի մեթոդով։
25	Նկարել նատյուրմորտ «Գարնանային ծաղկեփունջ»։ (2 ժամ)	Սովորեցնել նկարել ծաղկաման ծաղիկներով։

Դասացուցակ

Չորեքշաբթի	1-ին հերթ	9:00-9:40
	2-րդ հերթ	14:50-15:30